ԿԱՐԾԻՔ

Արուսյակ Գևորգի Գևորգյանի «Իրավապահ մարմիններում մարդկային ռեսուրսների կոնստրուկտիվ կառավարման յուրահատկությունը (ՀՀ ոստիկանության օրինակով)» թեմայով հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ԺԹ.00.03. «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ ատենախոսության վերաբերյալ.

Ա. Գ. Գևորգյանի ատենախոսությունը նվիրված է Հայաստանում մեծ արդիականություն ունեցող հիմնախնդիրներից մեկին՝ ոստիկանական համակարգում մարդկային ռեսուրսների կառավարմանը: Կրթական, առողջապահական, տնտեսական և այլ ոլորտներին վերաբերող հարցերից առանձնահատուկ ուշադրություն է դարձվում կառավարման առանձնահատկություններին, այդ թվում նաև իրավապահ մարմիններում կոնստրուկտիվ կառավարման հիմնախնդրին: Ներկայիս համաշխարհային տեղաշարժերը, հասարակական և քաղաքական փոփոխությունները, իստիտուցիոնալ բարեփոխումները, իրենց արտացոլումն են գտնում հասարակական գրեթե բոլոր ոլորտներում, այդ թվում նաև իրավական համակարգում և ձևավորում են նոր մոտեցումներ, պատկերացումներ, ու նոր պահանջներ ոստիկանական համակարգում մարդկային ռեսուրսների կոնստրուկտիվ կառավարման համար:

Հետազոտության նպատակն է բացահայտել այն յուրահատկությունները, որոնք առկա են ոստիկանական համակարգում ղեկավարի կոնստրուկտիվ կառավարման գործընթացում:

Ատենախոսությունը կազմված է ներածությունից (որտեղ հիմնավորված է թեմայի արդիականությունը, առաջադրված է վարկածը, աշխատանքի նպատակը, խնդիրները, ներկայացված են տեսամեթոդաբանական հիմքերը, հետազոտության մեթոդները, աշխատանքի տեսական և կիրառական նշանակությունը, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները), երեք գլուխներից, եզրակացություններից, որոնք ունեն տրամաբանական հաջորդականություն ու տեսականորեն շախկապված են, և հավելվածներից: Աշխատանքը շարադրված է 148 համակարգչային էջի վրա: Գրականության ցանկը կազմում է 193 գիտական աղբյուրներից և ներառում է ինչպես նախկին, այնպես էլ ժամանակակից աղբյուրներ տարբեր

լեզուներով, որոնցում լիովին արտացոլված են ուսումնասիրվող հիմնահարցերը: Հետազոտության հիմնական արդյունքների հավաստիությունն ապահովվում է օգտագործված տեսական դրույթներով, ընթացիկ և վերջնական արդյունքների քանակական մշակման վիճակագրական մեթոդներով:

Ատենախոսության «Մարդկային ռեսուրսների կառավարման հիմնախնդրի վերլուծություն» խորագրով առաջին գլխում հեղինակը տեսական վերլուծության է ենթարկել միջգիտական մոտեցումները մարդկային ռեսուրսների կառավարման, ինչպես նաև՝ կառավարման գործընթացի փուլերը, սկզբունքները և գործառույթները: Հեղինակն անդրադարձ է կատարել նաև կոնստրուկտիվ և դեստրուկտիվ կառավարում հասկացություններին, տեսականորեն վերլուծվել է նաև ղեկավարների կառավարման դեստրուկտիվության և կոնստրուկտիվության առանձնահատկությունները, յուրահատկությունները:

Ինչպես նաև վերլուծվել են այն հոգեբանական նախադրյալներն ու սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները, որոնք արտացոլում են մարդկային ռեսուրսների կառավարման հոգեբանական ասպեկտները

Ատենախոսության «Մարդկային ռեսուրսների կառավարման յուրահատկությունները ոստիկանության համակարգում» խորագրով երկրորդ գլխում ներկայացված են ոստիկանական համակարգում աշխատակիցների գործունեության առանձնահատկությունները, նրանց հոգեբանական պատրաստվածությունը, հոգեբանական ռեսուրսների հաշվառման ու գնահատման խնդիրները, ինչպես նաև լարված իրավիճակներում հոգեբանական անվտանգության առաջնահերթությունը: Հեղինակի կողմից վերլուծվել են ոստիկանի անձի նկատմամբ մասնագիտական-հոգեբանական պահանջների համալիրը: Քննարկման է ենթարկվում նաև իրավապահ մարմիններում տարբեր սոցիալ-մասնագիտական գործառույթներ իրականացնող աշխատակիցների հոգեբանական առանձնահատկությունները:

Ատենախոսության երրորդ՝ «Իրավապահ մարմիններում մարդկային ռեսուրսների կոնստրուկտիվ կառավարման յուրահատկությունների հետազոտության կազմակերպում ու արդյունքների վերլուծությունը», որտեղ արտացոլված է աշխատանքի հետազոտական ասպեկտի հիմնավորումը, էմպիրիկ հետազոտության կազմակերպման առանձնահատկությունները, անդրադարձ է կատարված մեթոդական համալիրի, համակազմի նկարագրմանը, ստացված որակական և քանակական տվյալների վերլուծությանը: Հեղինակի կողմից հետազոտության ընթացքում կիրառվել են

համընդհանուր մեթոդներ և մեթոդիկաներ: Ա. Գ. Գևորգյանի աշխատանքն արժևորվում է ընտրված հետազոտական բազմաբնույթ մեթոդներով ու մեթոդիկաներով: Վերլուծության մեթոդներ են հանդիսացել բովանդակային վերլուծությունը՝ տեղեկատվության ընդհանրացմամբ և խմբավորմամբ, մաթեմատիկական վիճակագրական վերլուծությունն՝ առաջնային նկարագրական վիճակագրությամբ և այլն:

Հետազոտության վերլուծության բոլոր փուլերում հեղինակը ցուցաբերել է բազմակողմանի գիտական հիմնավորումներ հոգեբանության, սոցիալական հոգեբանության, կառավարման հոգեբանության ժամանակակից պահանջներին համապատասխան: Տեսական և էմպիրիկ նյութի ընդհանրացման հիման վրա աշխատանքի հիմնական արդյունքներն ամփոփվել են եզրակացություններում:

Ատենախոսության հիմնական դրույթներն ու արդյունքներն արտացոլված են հեղինակի ատենախոսության սեղմագրում և հոդվածներում:

Աշխատանքի մանրակրկիտ ուսումնասիրությունը բացահայտեց որոշ վրիպումներ և թերացումներ, այսպես.

1. Կարծում ենք, որ աշխատանքի նպատակը հստակ և ամբողջական չի արտացոլում հետազոտության ներկայացված հիմնախնդիրը, քանի որ այն իրականում ուսումնասիրվել, վերլուծվել և աշխատանքի հետազոտական բաժնում ներկայացվել է հեղինակի կողմից:
2. Աշխատանքը բավականին կշահեր, եթե ատենախոսն ուսումնասիրությունների և հետազոտական տվյալների հիման վրա ներկայացներ նաև գործնական առաջարկներ, որոնք ցույց կտան ստացված արդյունքների կարևորությունն ու նշանակությունը հետագա կիրառության համար:
3. Հստակ ձևակերպված և առանձնացված չեն տեսական և կիրառական նշանակությունները:
4. Ցանկալի է ձևակերպումների հստակեցում կապված ներկայացված մոդելների հետ: Այսպես՝ խնդիր 6-ը կոնստրուկտիվ կառավարման /այսինքն գործընթացի/ մոդելի ստեղծման վերաբերյալ է /էջ 10/, իսկ արդյունքում՝ հեղինակը ստացել և ներկայացրել է ղեկավարի /այսինքն անձի/ մոդել /էջ 128/:

Սակայն վերը նշված դիտողությունները ոչ մի կերպ չեն արժեզրկում ատենախոսության նշանակությունն ու բովանդակությունը: Մեր կարծիքով դրանց հաշվառումը միայն կնպաստի աշխատանքի համապատասխան ձևակերպմանը և կբարձրացնի նրա արժեքը:

Այսպիսով կարելի է եզրակացնել, որ Արուսյակ Գևորգի Գևորգյանը **«Իրավապահ մարմիններում մարդկային ռեսուրսների կոնստրուկտիվ կառավարման յուրահատկությունը (ՀՀ ոստիկանության օրինակով)»** թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանավորման կանոնակարգի 7-րդ կետի և ԲՈԿ-ի կողմից ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացվող պահանջներին, և հեղինակն արժանի է հավակնած գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝

Հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Ն. Հարությունյան _____

ԵՊՀ գիտ. քարտուղար
Մ. Հովհաննիսյան _____

Ք. Երևան 12 հոկտեմբերի 2022թ.